

899.962.1-3  
5-45

23682

2003

899.962.1-3

5-45

15



ԹԻՖԼԻԾ

Տպարան Մ. Շարաձելի և ընկ.

Տիգ. Մ. Շարաձ. և Կ° Նիկ. ս. դ. 21.

1895

4684

899.962-1-3

5-45

Կ

203

155



Գ. ԾԵՐԵԹԵԼԻ

## ՄԱՐԴ-ԱՌԻՇ

Առազպելական պօչմա

(Պատկերագարդ)

Փոխադրեց

ԴԱԻԻԹ ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆՑ

— — — — —

ԹԻՖԼԻԶ

Տպարան Մ. Շարաձելի և ընկ.  
Tipog. M. Sharadze et al. Nik. ul. d. 21.

1895

1008  
35-378

Մ Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Ք

Հայոց ժողովրդական եւ մանկական գրադարանը  
շատ աղքատ է գրքերով, մանաւանդ պատկերազարդ  
գրքերով, որոնք մանկավարժական տեսակէտից շատ  
մեծ նշանակութիւն ունին մանուկների զարգացման  
համար: Ահա այդ պահասութիւնը մասամբ լրացնելու  
նպատակով մտադրուել ենք հրատարակել մի շարք  
ժողովրդական եւ մանկական ընթերցանութեան հա-  
մար պատկերազարդ գրքեր:

Այս գործը մենց սկսում ենք «Մարդ-Առիւծ» ա-  
ռասպելական պօչմայի փոխադրութեամբ, որի ընա-  
գիրը վրացերէն է, ոտանաւորով զրած եւ շատ սի-  
րելի է թէ ժողովրդին եւ թէ դպրոցական մանուկնե-  
րին:

Այս պօչմայի մէջ, որպէս հայելու մէջ, արտացո-  
լում է Տաճկաստանի մեր ազգակիցների ներկայ  
կեանքը իւր սարսափելի դրութեամբ, որի պատճա-  
ռով եւ փոխադրեցինք հայերէնի:

Դ. Տէր-ԴակիթեանՑ

Дозволено Цензурою. Тифлисъ, 14-го августа 1895 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Կ Յ Շ Ա Տ Ա Կ  
ՅՈՒՂ Ա.ԲԵՐ  
ՄԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ

Կ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 թ.


ԹԻՖԼԻՍ



Ապրում էին երեք եղբայր. առջնեկի ա-  
նումն Սրջեան էր, միջնակինը՝ Թարա-Մարդ,  
իսկ կրտսերինը՝ Մարդ-Ծոփւծ: Նրանց  
հայրը ծերութիւնից դեղնել էր, մազերը  
սպիտակել էին, բայց ինքը իւր երիտա-  
սարդական առողջութիւնը պահպանել էր:  
Նրան միշտ կարելի էր օգաղի առաջ նըս-  
տած տեսնել: Մահը կարծես չէր կարո-  
ղանում նրան յաղթել:

Գիւղացիները զարմացած էին մնա-  
ցել այդ մարդու վրայ, կարծում էին թէ  
Արտաւազի սպասաւորն է և կախարդուած: Հարևաննե-  
րն սկսեցին լուրեր տարածել ժողովրդի մէջ նրա մասին.  
իբր թէ այդ ծերը՝ զայլի վրայ հեծած ման է զալիս և  
օրիորդների ու տղաների սրտերը հանում է և իբրի կե-

բակուր տանում տալիս է Արտաւաղդին:—«Կամ ձեր  
ձեռքով սպանեցէք ձեր հօրը, կամ կորցրէք ուրիշ տեղ,



թէ չէ մի գիշեր կրյարձակուենք և կրակ կըտանք  
ձեր տունը, որովհետեւ այդ ծերունին սատանայի սպա-  
սաւորն է», սպանում էր ժողովուրդը ծերունու որդոց:

Վշտից և տիրութիւնից որդոց ախորժակն ու բու-  
նը փախաւ, նրանք կարծում էին թէ իրանց հայրը չար  
ողի է:

Երկար համբերելուց յետոյ նրա երեք գեղեցիկ որ-  
դինելը դիմելով իրանց հօրը, հարցրին.

— Հայրիկ, ցաւալի է, որ այդպէս ծեր ես ու չես  
մեռնում. ինչ է դրա պատճառը:

— Սիրելի զաւակներ, — պատասխանեց նրանց հայրը,  
ես կըմեռնեմ այն ժամանակ, երբ գնաք, շրջէք ամ-  
բողջ աշխարհ և տեսնէք այնպիսի մի հրաշալիք, որի  
մասին պատմելով՝ զարմացնէք ինձ:

Արջեանը գեռ համբուրեց հօր ձեռքը և ապա զրկեց  
իւր եղբայրներին:

— Հապա, որդի, — հարցրեց հայրը, — ինչ լուր ես բե-  
րել աշխարհից:

— Ճատ երկիրներ ման եկայ, շատ սարեր ու ձորեր  
անցայ, վերջը մի շատ զարմանալի բան տեսայ: Այդ  
բանը մի խրճիթ էր, որ ոչ առաստաղ ունէր և ոչ  
գուռը: Ոտս ներս դրի այդ խրճիթը թէ չէ, անակնկալ  
կերպով օջաղում կրակ վառուեց, երեցաւ մի մեծ  
կաթսայ ջրով լի և մէջը եփուեց մի ամբողջ ոչխար, ին-  
քըն իրան սեղան բացուեցաւ, դարսուեցան վրան հաց,  
վինի և բազմատեսակ կերակուրներ, բայց ոչ մի մարդ  
չերեցաւ այնտեղ: Մնացի բոլորովին զարժացած: Ճատ  
քաղցած էի, լաւ կշտացայ ու վերադարձայ մեր տուն:

Հայրը լսելով այդ հրաշալիքի մասին, զարմանքի մի  
նշոյլ անդամ չերեցաւ նրա դեղին դէմքի վրայ, այլ  
հանգիստ կերպով տարաւ ձեռքը դէպի իւր ալեոր մա-  
կերը, ուզգեց երկար մօրուքը և ասաց իւր զաւակներին.

— Որդիքս, ես եմ կառուցել այդ խրճիթը, որպէսզի  
քաղցած ճանապարհորդները կշտանան և օրնեն խրճիթի  
տիրոջը: Ահա այդ օրհնութիւնն է, որ ինձ կենդանի է  
պահում:

Արջեանը լսելով հօր պատասխանը, ճանապարհ ըն-  
կաւ հեռու աշխարհներ: Նա շատ առաջ գնաց, վերջա-  
պէս յոդնեց և կանգ առաւ մի վրանի առջե, որ ա-  
ռանց առաստաղի էր: Նա ներս նայեց և ինչ.  
օջաղի մէջ յանկարծ ինքն իրան կրակը վառուեց, վրան  
կաթսայ դրուեց, մորթուեց մի ոչխար, մաս-մաս կտրտուեց,  
շամփուրի վրայ շարուեց ու դրուեց կրակի վրայ: Կաթ-  
սան կերակրով լի մի կողմն էր եփուում, միւս կողմ խո-  
րովածն էր խորովուում և տեսնողի ախորժակը դրգուում:  
Բացուեց սեղանը, վրան դարսուեցան զանազան կերա-  
կուրներ, նրա հետ և Կախէթու զինի. առաջ բերուեցաւ  
տաք-տաք խորովածը, որից Արջեանի ախորժակն տեղի  
ու աւելի բացուեց: «Ահա այն հրաշալիքը, որի մասին  
ծերունի հայրս ասեց. խեղճ մարդ, նա այլիս ապրելու  
չէ, ես սլիտի լինիմ նրա մահուան պատճառը», մտածեց  
Արջեանը և չնորհակալութիւն յայտնելով անյայտ հիւրա-  
սիրողին վերադարձաւ տուն:

Փոքը եղբայրները՝ իմանալով Արջեանի գալուստը,  
գուրս եկան և գիմաւորեցին նրան, հետաքրքրուելով թէ  
ինչ հրաշալիք է տեսել իրանց մեծ եղբայրը:

Հայրը հրացայտ աչքերով նստած էր օջաղի առջե.  
Նրա երկար փառահեղ մօրուքը ծածկել էր կուրծքը: Նա  
առաջուց վիտէր, որ իւր որդին չէր կարող մի այնպիսի  
հրաշալիքի մասին պատմել, որ իւր զարմանքը շարժէր:

որովհետև մենակ էի, ուստի խենթինման աղաղակ բարձրացրի: Ահա այդ փոթորկի ժամանակ երկնեցաւ երկաթէ զգեստներ հազած մի մարդ, որ նստած էր հրեղէն ձիու վրայ: Այդ մարդը վագում էր եղջիւրաւոր դեմք յետելից և նրա վրայ հրեղէն շանթեր նետում, որի երկիւրից դեմք գոռում էր և դղրդացնում լեռները: Ել չկարողացայ ինձ պահել, վախից ծնկներս թուլացան, աշքերս մթնեցին և ես ուշաթափ վայր ընկայ գետին: Երազումս տեսայ սպիտակ մօրուքով և լուսով զգեստաւորուած մի աբեղայ, որ գալով ինձ մօտ ասաց. «Այ որդի, քեզ ով գցեց այս անմարդաբնակ անտառը: Վեր կաց, գնա, արդարութիւնս քեզ կ'առանջորդի, շատ լեռներ ու ձորեր կ'անցնես մինչեւ կըտեսնես մի տուն: Ներս մտիր և այնտեղ գու կըտեսնես մի հրեղէն ձի. կոփր նրա համար մեխեր, կերակրիր նրան դրանով. իսկ նա դրա փոխարէն կըհոգայ քո կերակրի և հագնելիքի մասին»: Յանկարծ զարթեցայ: Սքանչելի բնութեան մէջ գեղածիծաղ պայծառութիւն էր տիրում. պարզ երկնքից արեգակը ցոլացնում էր իւր մաքուր ճառագայթները: Բնութիւնը շատ խաղաղ էր: Զարթնելուս պէս իսկոյն վեր թռայ տեղիցս և մենմենակ ճանապարհ ընկայ. շատ երկար ման գալուց յետոյ, վերջը հասայ այստեղ: Ներս մտայ, տեսայ մի կողմում կապած էր հրեղէն ձի, իսկ նրա մօտ դարսած էին երկաթներ: Փշեցքամին, կրակը չաղացաւ. ես էլ սկսեցի մեխեր կոռել հրեղէն ձիու համար իբրև կերակուր և ծառայել նրան: Զին տեսնելով իմ այդ հոգսն ու աշխատանքը, սկսեց սիրել ինձ: Դրա վրայ գեռ ոչ ոք չի նատել, վինտրում է իրեն յարմար մէկին, որ իւր վրայ հեծնի. ինքնազլուխ սաւառնում է օդի մէջ և մի վայրկեանում անցնում է բարձրաբերձ սարեր ու ձորեր և միշտ բեռնաւորուած հաց ու զինիով վերադառնում է դարբնոց: Ահա այդ հրեղէն ձին

Հիմա էլ միջնակ եղայրը ճանապարհ ընկաւ, գնաց փնտրելու այնպիսի մի հրաշալիք, որ գար հօրը պատմէր և հայրը՝ իմանալով այդ, մեռնէր:

Ճատ ման եկաւ, մեծ տարածութիւն անցաւ, վերջապէս տեսաւ մի հաստարմատ ծառ, որ հովանի էր մի դարբնոցի: Ցղան ներս մտաւ այնտեղ: Դարբինը կանգնած զնդանի առաջ մեխեր էր կռում: Դարբնոցի մէկ կողմում կապած էր մի հրեղէն ձի, որի ճակատին փայլում էր ալմասէ եղջիւր: Զին դարձուրելի աղաղակ էր բարձրացնում, իսկ դարբինը իւր կռած մեխերն ածում էր ձիու առաջ, ձին ուտում էր և շուրջը սաստիկ լոյս արձակում:

Միջնակ եղայրը այդ բանի վրայ շատ զարմացաւ և ուղեց իմանալ, թէ այդ ինչ հրաշք է:

— Ո՞րտեղից է այդ ձին, կամ դու ով ես, հարցրեց նա դարբնին:

Դարբինն այնպէս յոպնել էր, որ քրտինքն աղքիւրի պէս հոսում էր նրա ճակատից: Իսկոյն դադարեցրեց իւր գործը և սկսեց զրոյց անել այդ տղայի հետ:

— Ես մի որք, անտէր և աղքատ պատանի էի. ապրում էի Բաքարի թագաւորութեան մէջ, անմարդաբնակ անտառներից մինում. կերակրում էի վայրի պտուղներով: Մի օր երբ արել մայր մտաւ և մութը պատեց աշխարհը, սկսուեց սարսափելի որոտում... Ես շատ վախեցայ,

Է ինձ պահում և կերակրում։ Ահա այս է իմ խորհրդաւոր պատմութիւնը։ Ջատերն են անցել այս կողմ, բայց էլ յետ չեն դարձել... այդ բանն այն ժամանակ կ'իմանաս, երբ անդադար առաջ կրգնաս։

Զարմացաւ միջնակ եղբայրը, լսիլով դարբնի խոր-  
հրդաւոր պատմութիւնը: «Այ հրաշք. կ'երթամ հօրս մօտ  
և կըպատմեմ իմ տեսած երկաթակեր ձիու մասին», ա-  
սաց նա իւր մտքում:

Մի հիմնալի պայծառ օր լուսացաւ։ Դուրս եկաւ  
փայլաճաճանչ արեգակը և երկիրը զարդարեց խւր ոսկե-  
գոյն ճառագայթներով։ Բնութիւնը կենսանացաւ։ Միջնակ  
եղբայրն ուրախ-ուրախ հասաւ իրանց տուն, ուր սպա-  
սում էր նրան ծերունի հայրը, յուսալով որ որդին իրան  
զարմանալի լուր պիտի բերի։

Որդին պատմեց հօրն ու եղբայրներին իւր տեսած դարմանալի ձիու մասին, բայց այդ հրաշքը ևս չզարմացրեց ծերունի հօրը, այլ ձեռքը տարաւ դէպի իւր ալեսր մագերը, ուզգեց երկայն մօրուքը և տաց.

— Զաւակներս, հրեղին ձիուն ես եմ կապել այն  
խրճիթում, բացի ինձանից ոչ ոք չի կարող նրա վրայ  
հեծնել:

Կրտսեր Եղբօր որտում ցանկութիւն ծագեց՝ ամրող  
աշխարհ շրջապայելու, զանազան փորձանքների են-  
թարկուելու և դորժով հօրդ գերազանցելու:

Վեր կացաւ և գնաց այն ճանապարհով, որով եղ-  
րայրներն էին գնացել: Ման եկաւ շատ տեղեր, և  
վերջապէս հասաւ մի տան, որ շրջապատռած էր ծառե-  
րով: Ներսից նա երկաթների թխթխկոցի ձայն  
լսեց: «Երեխ սա է դարբնոցը, այստեղ պիտի լինի հրե-  
զէն ձին», — ասաց նա և ներս մտաւ դարբնոցը, որտեղ  
տեսաւ բարձրահասակ, նորաբոյս մօրուքով մի երիտա-  
սարդ, իսկ նրա առջև կապած մի հրեզէն ձի: Ձին  
նկատեց Մարդ - Առիւծին թէ չէ, ուրախու-  
թիւնից այնպէս բարձրածայն խրինչաց, որ կարծես թէ  
իւր տիրոջն էր տեսնում և ցանկացաւ նրա հետ սաւառ-  
նել օդի մէջ:

—Այդ ի՞նչ է, ի՞նչ ես անում, հարցրեց Մարդ-Առիւծը դպրաբանին:

—Պարտականութիւնս այս է, պատասխանեց դարբինը, մեխեր կռելով:—Ճատ անցորդներ են ինձ նոյն բանը հարցըել, բայց ոչ ոք ոչ յետ է դարձել և ոչ էլ կըդառնայ:

Մարդ-Առիւծը շատ հաւանեց ձիուն. «Եթէ ձին  
հնազանդուի ինձ, գործը կըյացողուի», մտածեց նա և  
դարձնին խնդրեց իրան ընծայել ձին:

Կ ԳՐՈՒ ՀԱՐԱԿԵԴԻ ԱԽՐԱՎԱՆԵՐ:

— 14 —


— Այդ ինձնից մի խնդրիր, — պատասխանեց դարբիւնը, — որովհետև դեռ ոչ մի մարդ չի նստել հրեղէն ձիու վրայ. հեռացիր, կեանքդ փորձանքի մի ենթարկիր, ապա թէ ոչ կըդժբախտանաս:

— Անպատճառ այդ ձին իմս պիտի դառնայ. շատ եմ ցանկանում վրան հեծնել, — ասաց Մարդ-Առիւծը: Իզուր մի մերժիր, ապա թէ ոչ գլուխդ այդ զնդանի վրայ կըջախջախեմ և զօրով կըխեմ:

Հրեղէն ձին լսելով պատանու տուած սպառնալիքը, զարհուրելի ձայնով խրխնջաց. նա բարկացաւ Մարդ-Առիւծի վրայ և խր հրացայտ աշքերով նրան նայեց:

Մարդ-Առիւծը բանի տեղ չդրաւ հրեղէն ձիու բարկութիւնը, յարձակուեց վրան, կտրեց երկաթէ սանձը, դուրս բերաւ դաշտ և ճարպկութեամբ հեծաւ, ասելով. «Այժմ իմն ես, ով հրեղէն ձի, չարութիւն մի անիր, հանդարտուիր, քո հոգատար տէրն եմ»:

Չին բարձրացաւ երկինք և ուզում էր այստեղից պատանուն վայր գցել, բայց նա կպաւ ձիու փորին: Այդ ժամանակ ձին բարձրից ցած թռաւ և ուզում էր Մարդ-Առիւծին գետնի հետ հաւասարացնել, բայց պատանին հասկանալով ձիու մտադրութիւնը, դեռ գետնին չհասած, կրկին նստեց նրա մէջըն:



չրեղէն ձին հաւանեց իրան յարմար տիրոջը, ասծ-  
նատուր եղաւ և հպարտ-հպարտ սլացաւ երկնքի անհօն  
տարածութեան մէջ։ Նրա վրայ նստած էր սկզեափնջաւոր  
հեծեալլ՝ ուսերին գցած սպիտակ բաշլուզ, կողքին կա-  
պած ալմասէ սուր, ձեւքին բարակ կաշուփից հիւսած մըտ-  
րակ։

բակ։ Նրանք շատ դաշտեր ու ձորեր անցկացան և  
դուրս եկան մի կանաչազարդ մարգագետին...։ Այնտեղ  
Մարդ-Ըստիծը նկատեց մի ծառ, որի մի ճիւղի վրայ  
կպած էին զմբուխաներ, զարդարուած մարգարիտներով։  
Դրանք լոյս էին տարածում իրանց չորս կողմը և լուսա-  
ւորում ամբողջ դաշտը, ինչպէս լրացած լուսինը լուսա-  
ւորում է մուգ գիշերը։ Մարդ-Ըստիծը չկարողացաւ  
համբերել, սլացաւ գէպի գետին և պոկեց այդ թանկա-  
գին ճիւղը։

— Թռնղ, մի վերցնիր այդ ճիւղը. դա պատկանում է գելին, ապա թէ ոչ ճանապարհին շատ փորձանքների կը հանդիպես. Ի՞նչ հարկաւոր է քեզ չար հոգուն պատկանելի առարկան, աղաչում էր հրեղէն ճին Մարդ-Առիւծին:

Մարդ-Առիւծը այն արարածներից չէր, որ զարս-  
նար այդ տեսակ բաներից։ Նա սրտով ուղում էր իւր  
անձը փորձանքի ենթարկել։ Այդ պատճառով ուշադրու-  
թիւն շգարձրեց ձիու աղաշանքին և իւր հետ վեր առաւ  
անգին ճիւղը։

Անցան ամբողջ մարզագետինը, անցան շատ լեռներ ու ձորեր, ճանապարհին տեսան մի տարօրինակ ոսկէ թև, որի փետուրները աղամանդներով էին զարդարուած։ Հրեղին ձին շատ տիսրեց, երբ տեսաւ այդ. նա խելօք էր, գիտէր որ այդ տարօրինակ զիւտը շար ոգու սարքած որոգայիթ է մարդկանց համար, այդ պատճառով փնթփնթալով դարձաւ Մարդ-Սուխւծին. «Զվերցնես այդ ոսկէ թեր, ասաց նա, նրա տանելը քեզ մեծ վնաս կը տայ, այդ սատանաների սարքած թակարդ է»։

Սակայն Մարդ-Առիւծի աշքերը չուր կտրուեցին այդ թեմի գեղեցկութիւնը տեսնելով... Նա չկարողացաւ համբերել, կոացաւ և վերցրեց այն, ամենին բանի տեղ չդնելով հրեղէն ձիու խորհուրդը:

Սարսափելի մուլժ զիշեր էր. լուսինը չէր արձակում  
իւր ոսկեպոյն լոյսը: Յանկարծ նրանք հեռու մթութեան  
մէջ նվատեցին լուսոյ մի կայծ: Հեծիալ և հրեղէն ձին  
թիթեռի նման սլացան դէպի այն լոյսը: Ահա մօտեցան,  
և ի՞նչ տեսան. այնտեղ դրած էր մի ոսկէ խնձոր, իսկ նրա  
պահապանն էր մի օձ: Խնձորը գոհարներով, յակինթնե-  
րով և լալ (սուտակ)՝ բարերով զարդարուած էր և այնպի-  
սի հրաշալի լոյս էր արձակում, որ աղջամղջի մէջ կո-  
րած դաշտերն ու լեռները արեգակի պէս լուսաւորում  
էր: «Հեռացիր փորձանքից, չվերցնես ոսկէ խնձորը,  
թէ չէ մեծամեծ վնասների կըհանդիպես, որովհետև այդ  
դեինն է», զգուշացրեց նրան հրեղէն ձին:

Մարդ-Առիւծը բոլորովին շընդունեց ձիու խորհուրդը և ոչ էլ զգուշացաւ, այլ արձակեց իւր պողպատէ տէզը, սպանեց օձին և վերցնելով ոսկէ խնձորը դրաւ գլուպանը...:

— Ո՞վ ես, հարցը Մարդ-Առիւծը. — դէմքիցդ այնպէս է երկում, որ հարիսը տարուայ մեռեալ պիտի լինիս: Ինչու ես վեր կացել գերեզմանիցդ և ման գալիս:

— Ես ոչ մի պատասխան չեմ տալ քեզ, — պատասխանեց մահը, — մինչև վլուխդ փորձանքի մէջ շճենս. Նա միայն կարող է իմ ոսկրոտ անձս ճանաշել, ով որ կըսպանի սպիտակ դկին....:

Տիրեց Մարդ-Առիւծը, ճանապարհորդութիւնը չէր ուզում դադարեցնել. քաջն ընկզմուեց խորին մտածութեան մէջ, հետն էլ բարկացած այս ու այն կողմն էր տարածում իւր ձեռքերը:

Ճատ էր ուզում իմանալ թէ ինչ հրաշք է այդ, կամ խլվիկը ինչու է վշտացած: Անքան ցանկանում էր պատճառն իմանալ, որ պատրաստ էր կրա համար գոհել իւր անձը: Իսկոյն վեր թռաւ տեղից, հեծաւ իւր ձին և զառիվայր ճանապարհն իշնելով մտաւ մի ձոր:

Մեր քաջ պատանին արագ թռչելով օդի մէջ մօտեցաւ մի այգու, որի վրայ փիրուզանման երկնքը կամար էր կապել, բնութիւնը բազմաթիւ շքեղ գոյներով փարթամացել էր, իսկ արծաթահոս աղբիւրները ներգաշնակ ձայնով քչքչում էին:

Այգու մէջտեղը կանգնած էր բիւրեղեայ աշտարակ, շրջապատուած ոսկէ պարիսպներով: Աշտարակի զիսին ծածանուում էր օքսինոսի (ոսկեկար թաւիշ) դրօշակը, իսկ գրօշակի զլիսին դրած յաղթութեան լուսապայծառ թագը՝ իբրև նշան քաջագործութիւնների:

Այգու մօտ եղած քաղաքը նոյնպէս շատ հետաքըլքրական էր. նա այնպէս ընդարձակ էր, որ մի ծայրից միւս ծայր չէր երկում: Բիւրեղից և մարմարիսնից կառուցած տները զարդարում էին քաղաքը: Քաղաքի ամեն փողոցներում շողեկառքերը՝ անիւների վրայ կանգնած և զայ-

Զ

Մարդ-Առիւծն այդպիսով երեք թանկագին բան գրտաւ: Նա ուրախանում, հրհուում էր օդի մէջ սլանալիս, իսկ հրեղէն ձին անդադար հառաջում էր և նեղանում իւր տիրոջ վրայ. նա գիտէր որ իւր տէրը վտանգից չէր կարող խուսափել, և միայն այն էր մտածում, թէ ինչպէս աղատէր նրան:

Ծանր վշտերը պատեցին հրեղէն ձիուն. նրանք շարունակելով իրանց ճանապարհը ձորի մէջ վազող գետի ափով, վերջապէս գուրս եկան մի ընդարձակ դաշտավայր, որի մի կողմում լեռան ստորոտում բուսել էին բազմաթիւ ծառեր. այդտեղ լսում էր ձորի մէջ վազող գետի աղմուկը: Չին սկսեց լեռաը բարձրանալ: Քրտինքը ջրի նման թափում էր նրա վրայից: Վերջը հասաւ լեռան ձիւնապատ զագաթին: Այդտեղից երեսում էր ահազին տարածութիւն ճախճուտներ, ժայռերի վրայ նլստոտած հանգստանում էին եղնիկներ:


Մարդ-Առիւծը զառիվայր ճանապարհով պիտի գրնար. նախ քան ճանապարհը շարունակելը նա ձիուց վայր իջաւ փոքր ինչ հանգստանալու: Մարդ-Առիւծին վախեցնելու համար երեցաւ մի տարօրինակ խլվիկ, որի մարմնի միսը բոլորովին հալուել, միայն ոսկրոտ կմախօն էր մնացել: Չեռքին երեք լարեայ տաւիդ բռնած ածում էր և հետը երգելով մօտենում Մարդ-Առիւծին: Զարհութեալ և զգուելի խլվիկը մահն ինքն էր:

դարուած թաւիշով ու թանկաղին գործուածքներով,  
սրաթև արծուի նման սլանում էին՝ իրանց հետ տանե-  
լով բազմաթիւ մարդկանց:

Աւելի զարմացաւ Մարդ-Առիւծը, երբ տեսաւ որ  
բոլոր ժողովուրդը սեեր է հագած: «Մարդ իմանայ՝  
ինչ է սրանց ցաւը», մտածեց բաջ պատանին: Քաղաքի  
դրսի արուարձանում նա վայր իջաւ ձիուց, կապեց այն-  
տեղ և առաջին հանդիսող մարդուն հարցրեց.

— Ինչու ամենքդ էլ սեեր էք հագել և տիրամած  
դէմքերով էք ման զալիս, քանի որ ձեր քաղաքն այս-  
պէս հրաշալի է և կեանքը՝ վայելուչ:

Տիուր, վշտացած սգաւորը պատանուն պատմեց Ժո-  
ղովրդին հասած դժբախտութիւնը, և թէ ով էր պատ-  
ճառը քաղաքի այդ քամբախտութեան:



ու յագենում նրանց արինով։ Դևն ատելի է դարձել ամենքին։ Իմ և քո ժողովուրդը միայն նրանով երջանիկ են, որ այն պիզծ գեին չեն հպատակում... Բայց լռութիւնը վասնվաւոր կրիխի, երբ թշնամին մեր դռան առաջ ևս կանգնի... Աշխատենք առաջուց մենք նրան վընասել, լաւ չէ լռու հանդիսատես լինել այդ անարդարութեան, մեր յոյսը դնենք Աստուծոյ վրայ և չթոյլ տանք նրան չարութեամբ և արինով լցնել աշխարհը...»

«Թագաւորի ուրախութեանը չափ չկար, նա խրախուսուած՝ ինչպէս միշտ սովորութիւն ունէր, ժողով կազմեց, հրաւիրեց իւր աղջկանց, նազիր վէզիրներին և հաւատարիմ պալատականներին։ Հուտափոյթ մարդ ուղարկեցին իմաստուն ջրաղացանի ետևից՝ նրան կանչելու, որ գար և բաց անէր ժողովը։

«Բացուեց արքայական ոսկէ դահճի ոսկէ զուռը... մի կողմում գարսուած էին բիւրեղեայ թախտեր, երեք լռուսանման աղջկանց նստելու համար։ Նրանց յետե մի բանի աստիճան բարձր ոսկէ կամար էր կապած, որի վըրայ ամրացրած էր արքայական թագը։ Նրա ներքն նրսուած սպասում էր Բաքար թագաւորը իւր աղջկանց։ Եկան և լռուսանման ալբայագուստըները, նստեցին հօր առաջ թախտերի վրայ, խորհրդականները բռնեցին իրանց տեղերը։ բայց խորհուրդը գեռ չէր սկսում, որովհետեւ սպասում էին ջրաղացանին... Ահա ներս եկաւ և՛ ջրաղացանը, ամենքը ոտի կանգնեցին։ Եերունին ջրաղացանը բարեց ժողովականներին, և դառնալով դէպի թագաւորը խորին կերպով ողջունեց նրան։ Գլխին նահապետական զլսարկ, ձեռքին գաւազան, ազգային տարազով հագուստը իշնում էր մինչև նրա ծննդերը։ Այդ էր ծերունու արտաքին բոլոր զարդարանքը։ Նա նստեց գորգերով ծածկուած տեղը և բաց արտ

«Այս քաղաքը, ուր նստում է մեր թագաւորը, երկրի աշըն ու սիրան է։ Այստեղ պարապ մարդ չկայ։ Ամեն ոք շտամում է իւր գործին, ամեն ինչ շարժողութեան մէջ է։ Ծոյն այս քաղաքում չի կարող ապրել։ Մի խօսքով այս քաղաքում կեանքը եռում է։ Աշխատասէր, արդար մարդն այստեղ խաղաղ եքաղը կեանք է վարում, իսկ ծոյլ, աշխատել չսիրող մարդու համար կեանքը շատ դառն է անցնում։ Մեր թագաւորն է Բաքարը։ Նա մեծին և փոքրին խրախուսում է դէպի արդար վաստակ ու աշխատասիրութիւնն, որ տէրութիւնը հաստատ մնայ և հետզհետէ ամրանայ։ Բաքարը երեք աղջիկ ունի, ուրմիք գեղեցիկ են ինչպէս արեգակ։ Երեքն էլ իրանց հօր խորհրդակիցներն են և մասնակից արքայական բոլոր վըճիւններին։ Ժողովուրդը սեպհական կրօն և լեզու ունի։

«Բաղաքից փորր ինչ հեռու, լեռան ստորոտում մի սկ անտառ կայ, որի մէջ վազում է ձկներով լիմի սառը գետ։ Գետի երկու ափերի վրայ բռւսած են տեսակտեսակ ծառեր, իսկ գետի ակտների մօտ կանաչաղարդ և ծաղիկներով լի մի բակ կայ։ Այդ գետի վրայ մի քարուկրեայ ջրաղաց է կառուցուած։ Ջրաղացում նստած է հարիւր տարեկան մի ջրաղացան, որ յայտնի է իւր իմաստութեամբ։ Նրա մօտ ոչինչ չեն տանում աղալու։

ժողովը... Թագաւորի հետ միասին ամենքն էլ սկսեցին ուշադրութեամբ ականջ դնել ծերունուն:

— Ծովի և կղզիների տիրապետող «Անգլ-օձը», — այսպէս սկսեց ծերունին, ձեւքին ջուր և կրակ ունի, որով կարող է դեմքին քանդել։ Մենք դեմք և «Անգլ-օձի» տէրութիւնների սահմանակից ենք։ Դեմ աշխարհի թշնամի է, իսկ «Անգլ-օձը» բարեկամ և օգնող։ Այժմ պիտի ընդունենք նրա առաջարկութիւնը, և հէնց այս տարի պիտի դատարկենք մեր բոլոր նաւահանգիստները նրանց նաւատորմիջների համար, ու ամեն տեսակ պաշտի մատակարարենք նրա զօրքին։ Երանել թէ կարողանայ սպանել այն զազրելի դեմքն, որ էլ վախ չլինի. իսկ այդ նպատակին համենելու համար ոչ մի բան չպիտի խնայենք, ամեն կերպ օգնութիւն պիտի տանք օձի զօրքերին... կամ մեռնենք նրանց հետ միասին պատերազմի վաշտում, կամ յաղթենք և մեր ժողովրդին աղատենք դեմք ապագայ զարհուրելի իշխանութիւնից...»

«Ճերունու խելօք խորհուրդը ամենքը հաւանեցին և միշտ հայրենիքի սիրով վառուած մարդուն յայտնեցին իրանց բուռն չնորհակալութիւնը։

«Փողով փակուեցաւ։ Խորհրդականները ցրուեցան։ Դահլիճը դատարկուեց։

«Զարկեցին պատերազմական թմբուկները... Ժողովուրդն ուրախ էր՝ յաղթութեան յոյս ունենալով։

«Անգլ-օձի» նաւատորմիջն արդէն ափը հասաւ։ Ամենից առաջ մոնշիւնով սրանում էր հրեդէն կառքը բազմաթիւ նաւատաներով։ Նրանց տարօրինակ լախտերը փայլվում էին արեգակի առաջ, իսկ երկար չգթաները չըլսչըլուում էին։ Անցան օրեր ու ամիսներ, բայց զօրքերը դարձեալ գալիս էին ու դալիս։ Զարմանքը տ-

մենքին պաշարել էր, թէ «Անգլ-օձին» նրտեղից էր այդքան բազմաթիւ զօրք, կամ այդքան նաւաստիներ։

«Թագաւորը բանակ ձգեց բարձր լեռան գագաթին, այնտեղից դիտելու դեմք բանակը մինչև ծովը։ Սպիտակ ծովը ծածկուել էր նաւատորմիջով և ստացել էր անտառի կերպարանք։

«Եղանակը գարնանային էր և օդը ախորժելի, երբ «Անգլ-օձի» զօրքերը հասան Բարձր թագաւորի երկիրը և բռնեցին բոլոր դաշտերն ու լեռները։

«Դեմ լսելով, որ «Անգլ-օձի» զօրքերը շրջապատել են իւր երկիրը և պաշարելու վրայ են, թափեց նրանց վրայ իւր բարկութեան շանթերը. երկինքը ծածկուեց թմբը մարախուղով, փշեց քամին և գերեզմանային խաւար տարածուեց երկրի ամեն կողմ։ Բարձրացաւ այնպիսի սարսափելի փոթորիկ, որ ծառերն արմատահան էին լինում և շպուտում մի քանի վերստ հեռու... Թագաւորն ընկաւ յուսահատութեան մէջ, վշտացած փետեց իւր մօրուքը, հաւաքեց զօրքերը և լեռնից ցած իջաւ. բայց ինչ. ամբողջ երկիրը դղրդում էր, խաւար մռայլը պատել էր երկինքը, ճանապարհը չէր որոշում։

«Ո՞վ կարող էր մտածել, թէ սպիտակ դեմք երկընքումն էլ իշխանութիւն է ունեցել և կարող է երկինքը ամպերով ծածկել, իսկ երկիրը դղրդացնել։

«Արևմտեան կողմից թնդիւն-ճայթիւնը վախեցրին թագաւորին և հպատակներին, ամենքն սկսեցին ողբալ, չինի թէ դեմք յաղթէր օձին։

«Մի տարուց աւելի սաստիկ պատերազմը շարունակում էր արևմտեան կողմ, մարդիկ՝ ընկած ահ ու սարսափի մէջ, չին կարողանում քնել։ Ոչ ոք չկարողացաւ գութան լծել, որովհետեւ արեգակը չէր լուսաւորում,

իսկ թնդիւն-ճայթիւնն ու կայծակները երկիրը տագնապի  
մէջ էին ձգել:

«Յուսահատ Բաքարը սևեր հագաւ, նրա լու-  
սանման դուստրներն ընկան ահ ու սարսափի մէջ...  
ծերունին շատ տխուր էր, որովհետեւ նշանները վատ էին  
երեսում: Ժողովուրդն ընկաւ մտատանցութեան մէջ: Յան-  
կարծ լսուեց աւելի ուժգին թնդիւն և վայր ընկաւ մի  
մեծ կայծակ, իմաց տալով պալատին, որ գեի ձեռքից  
օձը փախաւ և իրան ազատելու համար գիմեց գէպի ծո-  
վը. . էլ անկարելի է նկարագրել այն բարկութիւնը, ինչ  
որ թագաւորի վրայ թափեց դեր: Դեն սպառնաց նրան՝  
իրեւ դաշնակցե և օդնողի «Անզլ-օձի», յափշտակել աղ-  
ջիներ և տղաներ: Ներս թափուեցին բաղմաթիւ շէկ  
մարդիկ, իրանց հետ բերելով կախարդներ, որոնք եր-  
կաթէ զգեստներ ունէին հագած: Ժողովեցին զեղեցիկ  
մատաղաս աղջիկներին, կապկալեցին բարակ պարան-  
ներով, բռնեցին երիտասարդներին և ձեռքները շղթանե-  
րով կաշկանդեցին: Նրանց ազադակն ու կոծը բարերին  
լացանում էր: Նրանց մայրերի աշքերից թափած ար-  
ցունքները հալ ու մաշ էին անում գետինը:

«Միայն ազատուեցան թագաւորի երեք լուսանման  
դուստրները՝ թագնուելով ներքնատան մէջ: Բայց կա-  
խարդներն իմանալով այդ՝ ասացին.—«Միւս անզամ կը-  
գանք և զրանց էլ կըտանենք դեի մօտ:

«Բաքարի երկիրը սաստիկ տագնապի մէջ ընկաւ.  
և ահա այդ պատճառով ժողովուրդը սևեր հագաւ և  
սուգ մտաւ: Այժմ կոծում են երեք լուսանման աբրայա-  
դուստրները, երբ մտածում են որ գեի մօտ պիտի  
տարուեն: Տիսուր և ծանրը է ժամանակը: Տիրում  
է ընդհանուր վհատութիւն: Բռնաւորը ոտ դրաւ  
մեր երկիրը: Ո՞ւր է արդեօք մի հերոս, որ կա-

բողանայ մեր ոտնակոխ արած հայրենիքը ազատել  
բռնաւորից»:

Սևազգեստ մարդը վերջացնելով իւր պատմութիւնը  
չկարողացաւ զսպել իւր արտասուրը և դառն կերպով հե-  
կեկաց: Մարդ-Առիւծը շատ ցաւեց իմանալով ժողովրդի  
դառն վիճակը: Նա վճռեց մնալ այդ քաղաքում, որդի  
դառնալ ձնչուած ժողովրդի և նրա ցաւն ու վիշտը մի  
կերպ թեթեացնել: Հրաժեշտ տուաւ սեազգեստ մարդուն,  
հեծաւ հրեղէն ձիու վրայ ու առաջ զնաց:



այդ տարօրինակ իրերը, և զարմանում էին՝ թէ դրանք նրտեղից են բերուած:

Մթնեց... գեղանման քոյրերն ուրախացած թանկաղին ընծաներով և Մարդ-Առիւծի տեսքով, հրճուանկով փաղաքում էին իրանց հօրը: Բարարն էլ ուրախացած նրանց հետ՝ Մարդ-Առիւծին չնորհեց մեծ վէզիրի պաշտօնը. հրեղէն ձիուն կապեցին արքայական ախոռում և երկալթներով սկսեցին կերակրել:

Վէզիրների նախանձը հասաւ այն աստիճանի, որ սկսեցին որովայթներ լարել և մի կերպ կործանել Մարդ-Առիւծին: Ահա այդ նպատակի համար մի զիշեր հաւաքուեցան ծերունու ջրաղացում և նստեցին կապերտի վրայ, իսկ ծերունին գաւադանի վրայ յենուած բազմեց աթոռի վրայ. բայց նա երդուել էր հաւատարիմ մնալ հայրենիքին: Հայրենասէր ծերունին, տեսնելով վէզիրների գոմաթափ գէմքերը, հասկացաւ նրանց մտադրութիւնը, ուստի սկսեց մխիթարել և յոյս տալ.

— Ինչո՞ւ էր այդպէս յուժահատուել, ի՞նչ է ձեր վիշտը:

— Թագաւորը խլեց մեզանից վէզիրութիւնը, որովհետեւ նա իրան յարմար մի օտար երիտասարդ հերոս գտաւ: Նրա գեղեցկութիւնն անչափ է, նստում է ալմազէ եղջիւր ունեցող հրեղէն ձիու վրայ, որ դարմանի տեղ երկաթ է ուտում: Ոչ ոք չգիտէ թէ ով է այդ հերոսը, կամ նրտեղից: Այդ հերոսն արքայադուստրներին երեք հրաշալի ընծաներ մատոյց. մի ծառի ճիւղ՝ մարզարիտներով զարդարուած, մի սուկէ թէ ակներով զուգուած, և մի սուկէ խնձոր էլ՝ լալ քարերով պատած. երեք ընծաներն էլ արեգակի նման վայլում են...:

Ծերունին իսկոյն հասկացաւ, թէ որտեղից էին այդ թանկագին իրերը. նա ճանաչում էր գեի այգին, այդ

Մարդ-Առիւծը հրեղէն ձիով ներս մտաւ քաղաք, ամենքն սկսեցին զարմացած նրան նայել: Լուսանման արքայադուստրները աշտարակից նկատեցին նրան և հետաքրքրուեցին. «Ո՞վ է այդ տարօրինակ գեղեցիկ ձիաւորը», ասացին նրանք:

Թագաւորը հրամայեց ձիաւորին բերել իւր մօտ: Ահա հեռուից երեաց Մարդ-Առիւծը նազիր-վէզիրներով շջապատուած, որոնք մեծ փառքով բերում էին նրան: Լուսանման քոյրերը հրճուեցան՝ նայելով Մարդ-Առիւծին:

Աշտարակի առջև եղած պատշգամբը ծածկուած էր մետաքսախառն շալեղէն վարագոյրներով: Մէջտեղը գըրած էր արքայական փղոսկրէ գահը, իսկ նրա առջև դարսած էին թանկագին թախտեր, որոնց վրայ բազմած էին արքայադուստրները, իսկ գահի վրայ նստած էր բաքարը, որի գէմքը բարութիւն էր արտայայտում:

Մարդ-Առիւծը սիզամեմ քայլերով առաջ անցաւ, մօտեցաւ գահին և խորին կերպով ողջունեց արքային: Նա նկատեց լուսանման արքայադուստրներին, հանեց իւր տարօրինակ ընծաները և նուիրեց նրանց, մեծին նուիրեց ճիւղը, միջնակին՝ թեր, իսկ գոհարները և ոսկէ խնձորը՝ կրտսերին: Արքայադուստրները շատ հաւանեցին

պատճառով ընկաւ խորին մտածութեան մէջ։ Բայց երբ  
իմացաւ որ հրաշալի պատահին Մարդ-Առիւծն է, իսկոյն  
ուրախութիւնից կարմրեց նրա սպիտակ դէմքը։ Նա հաս-  
կացաւ որ ճնշուածների համար ազատիչ է երեացել և  
արդէն մօտեցել է այն երջանիկ ժամանակը, երբ հերոսը  
սպիտի ջախջախէր ստրկութեան շղթաները և սպիտակ  
դեմքն բոլորովին կործանէր։ Ծերունին հասկացաւ, որ  
հրեղին ձին պատահու խորհրդատուն է և միշտ խելօք  
միջոցներ է ցոյց տալիս ճնշուածներին ազատելու հա-  
մար։ Ծերունին համոզուած էր որ Մարդ-Առիւծը կարող  
է պիղծ դեմքն սպանել հէնց իւր ընտակարանում։ դրա հա-  
մար որոշեց նրան ուզարկել դեմքի այգին։

Վէզիրները նախանձով լցուած, անհամբեր պատա-  
խանի էին սպասում ծերունուց։ Նա ասաց։

— Գնացէք և յայտնեցէք թագաւորին, որ ես վշտացած  
եմ. ինչու է ընդունել դեմք այգուց գողացած իրերը, միթէ  
չպիտէ, որ դեռ շուտով կ'իմանայ այդ բանը և ամբողջ եր-  
կիրը հիմնայատակ կ'անէ։ Ասացէք նրան որ բոլորը յայտ-  
նի Մարդ-Առիւծին և դարձեալ ուզարկէ այնտեղ, որտե-  
ղից բերել է այդ տարօրինակ ընծաները։ Եթէ նոյն տե-  
սակ ընծաներով յետ դառնայ, այդ կընշանակէ թէ սպա-  
նել է դեմքն, դրա համար փառքով կ'ընդունենք և գեղա-  
նման արրայադուստրներից մէկին էլ կըտանք նրան։ Այն  
ժամանակ Մարդ-Առիւծը կըլինի ժողովրդի ստրկութեան  
կապանքների քանդողը, մեր հայրենիքի ազատիչը և մեր  
թշնամու ջախջախողը... Ժողովրդի մտրից անմոռանալի  
կըդառնայ նրա վեհ անունը և արժանի կըլինի թագա-  
ւորի ժառանգ դառնալու։ Անվեհեր հերոսին սաղ կըգայ-  
ծիր ժառանգ դառնալու։ Բայց եթէ յետ  
ծդառնայ այն տարօրինակ ընծաներով, իմացէք որ դեմք  
նրան սպանել է։ Այդ միջոցով միայն կարելի է վտանգը

հեռացնել մեղանից՝ գողացած հրաշալի իրերը վերադարձ-  
նելով դեմքն։

Վէզիրները լսելով ծերունու խորհուրդը, շատ ուրա-  
խացան։ Նրանք յուսով էին որ իրանց հետ մրցող և թա-  
գաւորի առաջին վէզիր դարձած Մարդ-Առիւծը դեմք կե-  
րակուր կըդառնայ։ Այդ յուսով վերադարձան Բաքարի մօտ  
և մի առ մի պատմեցին ալեսոր ծերունու խորհուրդը։  
Թագաւորը շատ տիրեց և վշտացած ձայնով յայտնեց։

— Թո՞նդ այստեղ գան գուտտրներս։

— Զէ որ ես քեզ ասացի, թէ ձեռք մի տար այդ  
երեք իրերին, այժմ մեզ մեծ վտանգ է սպառնում: Ել  
հնչու չկայ, պիտի ճանապարհ ընկնենք, միայն թագա-  
տրից խնդրիր մի ոչխար և մի սուր դանակ:

Մարդ-Առիւծը թագաւորից երեք օր ժամանակ  
խնդրեց: Այդ ժամանակը լրանալուց յետոյ դիմեց թա-  
գաւորին.

— Թագաւորն ապրած կենայ, ինձ հետ վերցնելու եմ մի-  
ան մի ոչխար և մի դանակ. կըսպասես մի տարի, եթէ  
այդ ժամանակին չվերադառնամ, իմացիր որ կենդանի չեմ:

Մարդ-Առիւծը վերցրեց ոչխարն ու դանակը, նստեց  
հրեղին ձիու վրայ, Ժոաւ երկինքը և առաջ սլացաւ, իւր  
ետկից թողնելով բազմաթիւ դաշտեր ու լեռներ:

«Այս ի՞նչ վտանգի մէջ ձգեց մեզ Մարդ-Առիւծը.  
Ինչու իզուր գլուխս փորձանքի տուի», մտածեց թագա-  
տրը և ընկաւ խորին մտատանջութեան մէջ:

Եկան գուստիները, բազմեցին սրահում իրանց գա-  
հերի վրայ և հարցրին հօրը.

— Հայրիկ, ինչու ես տիրել, ի՞նչ է պատահել քեզ,  
իմացիր, որ եթէ տիրութեանդ պատճառը չյատնես, մեզ  
շատ կըվշտացնես:

— Ձեզանից ոչինչ չեմ կարող թաքնել, սիրելի  
գուստիներս, պատասխանեց Բաքարը.— Ծերունին խոր-  
հուրդ է տուել Մարդ-Առիւծին մեզ մօտ չպահել. որով-  
հետև այն իրերը, որ ձեզ նուիրեց, յափշտակել է դեկ  
այլուց և այժմ որպէսզի ազատուենք դեկ որովայթնե-  
րից, Մարդ-Առիւծին նորից պէտք է ուղարկներ դեկ այ-  
զին, որ եթէ կարողանայ այնտեղից դարձեալ ըերել  
թանկագին իրեր մեզ համար ընծայ, այն ժամանակ մի-  
այն վէղիր կըգարձնենք:

Սյդպէս էլ որոշեցին:

Գեղեցկագէմ և բարձրահասակ Մարդ-Առիւծը կանդ-  
նեց լուսանման քոյրերի առաջ, ուշագրութեամբ լսեց Բա-  
քարին, հպատակուեց նրա հրամանին և գնալով իւր հրե-  
ղին ձիու մօտ, յայտնեց նրան թագաւորի վճիռը: Զին  
տառաց.

սարսափելի աղմուկ. որոտում էր երկիրը, աղաղակում  
էին ծառերը, լսուեց գեր գոռումը և հետն էլ սպառ-  
նալիք Մարդ-Առիւծին. Հրեղէն ձին նորից թուաւ պա-  
րսպի վրայից և առաջ ոլացաւ օդի մէջ. նրա ետե-  
ւից ընկաւ գեր, որից լսում էր այնպիսի աղմուկ, որ  
շրջակայ լեռները շարժւում էին:

Անցան մի շատ ընդարձակ դաշտ. Դեմ այնպէս արագ  
էր վագում, որ համարեա մօտեցաւ հրեղէն ձիուն, և հէնց  
որ հասաւ Մարդ-Առիւծին ու ձեռքը մեկնեց նրան բըռ-  
նելու, հրեղէն ձին բացականչեց.

—«Վայր ձգիր սուր դանակդ:

Սուր դանակը վայր ձգելուն պէս յանկարծ շրջա-  
պատող ժայռերն այնպէս սրածայր դարձան, որ գեր իւր  
ձեռքերն ու ոտները կտրատելով սաստիկ վիրաւորուեց:  
Երինն աղբիւրի պէս սկսեց հոսել նրա մարմնից, ցաւը  
անշափ կատաղեցրեց գերին, բայց չպիտէր ինչ անէր. սակայն  
չուզենալով գողին ձեռքից բաց թողնել, զսպեց իւր  
ցաւը և բացականչեց Մարդ-Առիւծի ետեից.

—Կանզնիր, վախկոտ, հասել է րո վախճանը, այս  
ժայռերի վրայ պիտի վլուխդ ջախջախուի իմ ձեռքով...:

Դեր վերջապէս մօտեցաւ ձիաւորին, յարձակուեցաւ  
վրան և իւր սուր շանգերով վիրաւորեց ձիու ազ-  
գուրը: Զին յանկարծ յետ ցատկեց և ընկաւ մի եղեգնոտ ան-  
դունդ: Մարդ-Առիւծը թուաւ, լարեց աղեղը և քաշեց  
նետը: Նրա հանգէպ ժայռի ծայրին կանգնած էր գեր  
բերանը բաց և ձեռները դէսի առաջ մեկնած, պատրաստ  
դժբախտ Մարդ-Առիւծին բռնելու և պատաւ-պատառ  
անելու, երբ յանկարծ ոլացաւ նետը և դիալաւ գերի-  
կրծքին... Դեմ ուզում էր նետը գուրս բաշել իւր կըրծ-  
քից, բայց ուժասպառ ցած ընկաւ ժայռից, մի անգամ  
աղաղակեց և տեղին ու տեղը վիշեց պիղծ շունչը...:

**Փ** Այնտեղ, ուր երկնակամարը կրթնում է գետնին,  
երեւում է սպիտակ, պարզ ծովը, որի մէջ լուսինը թա-  
փանցելով արձակում է իւր ոսկեպոյն ճառագայթները,  
ահա այն էր գեր լիճը, որի շուրջը գանուած հրաշագեղ  
այգին լրւսաւորուած էր պայծառ աստղերով. այնտեղ ոս-  
կէ փետրաւոր հաւը կրթներում էր ոսկէ ձուերի վրայ, ե-  
ղննին մարգարիտներով և զմրուխտներով էր զարդա-  
րուած, խնձորնին՝ ոսկէ խնձորներով, իսկ խնձորները՝  
լալքարերով... Այգու դռան առաջ կապած էր մի սկ և  
կատաղի արջ:


Հրեղէն ձին Մարդ-Առիւծին խորհուրդ տուաւ ոչ-  
խարը ձգել արջի առաջ... Արջն իսկոյն սկսեց պատառո-  
տել իւր սուր ատամներով:

—Այժմ մտրակիր ինձ, որ պարսպից ցած թուչեմ  
գեր այգին, որտեղից թանկագին իրեր ձեռք կըրերես,  
ասաց ձին:

Մարդ-Առիւծը սաստիկ մտրակեց ձիուն, ձին պա-  
րիսսների վրայով թուաւ այգին: Մարդ-Առիւծն իսկոյն  
յարձակուեց խեղճ հաւի վրայ, կտրեց նրա թերը, յետոյ  
յափշտակեց մի ոսկէ խնձոր...:

Լսուեցաւ այգու սարսափելի դղբողոցը, խնդրում էին  
արջից օգնութիւն, բայց նա այնպէս համեղ ճաշ էր ա-  
ռում, որ մոռացել էր ամեն ինչ: Ամեն կողմից սկսուեց

Դալար խոտերով ծածկուած ձորը ներկուեցաւ կարմիր արիւնով։ Մարդ-Առիւծն առանց ժամանակ կորցնելու, յարձակուեցաւ գեի վրայ, սրով ճղեց նրա կուրծքը, հանեց այնտեղից լեզին և վազեց ձիու մօտ։ Խեղձ ձին եղեգների մէջ ընկած սաստիկ տնքում էր, աղ-



դրից արին էր հոսում... չէնց այն է ձին պիտի շունչը տար, երբ վրայ հասաւ Մարդ-Առիւծը, գեի լեզին քսեց շանգոռուած ազդրին, որ խսկոյն առողջացաւ։ Զին վեր թռաւ տեղից։ Հերոսն ուրախութիւնից համբուրեց նրա աչքերը, յետոյ թռաւ նրա մէջքի վրայ և

ուրախ-ուրախ առաջ սլացաւ ու մի ակնթարթում անցաւ ամբողջ ծառաստանը՝ գոհ լինելով իւր բախտից։

Երկրի թշնամի՝ սպիտակ գեի մահը կայծակի արագութեամբ տարածուեցաւ երկրի ամեն կողմը։ Ամեն տեղ սկսեցին զուարճութիւններ անել և կերուխում արքել։ Բարարի ժողովրդի մէջ կենդանի շարժողութիւն ընկաւ։ Քաղաքը լուսաւորեցին զոյնզգոյն ճրագներով, հանեցին սև զգեստները, զարդարուեցան կանաչ-կարմիրներով, բռնակալը մեռել էր, երկիրն ազատուել բռնաւորի ճանկերից։ Պատշգամբում երեք լուսանման արքայադուստրները նստած անհամբեր սպասում էին իրանց փեսացուին։ Նրանց կուսական անմեղ սրտերը արագ-արագ տրոփում էին։ Նրանք մտքով Մարդ-Առիւծի մօտ էին, ամեն մէկն ուզում էր նրա կինը լինել։ Այդպիսով նրանց սրտերի մէջ նախանձ ծագեց։ բայց թէ ինչո՞ւ, իրանք էլ չէին կարողանում պատճառն իմանալ։ Ճատ էին յուզուած, շարունակ լաց էին լինում։ Քոյրը նախանձում էր իւր հարազատ քրոջը, բայց չէր յայտնում նրան։ Նրանցից ամեն մէկը փափագում էր Մարդ-Առիւծի գալուն, բայց և չէր ուզում որ նա գայ։ Նրանց զգացմունքն այնչափ էր շարժուել, որ քոյրը ցանկանում էր քրոջ մահը, միայն թէ ինքը Մարդ-Առիւծի կինը դառնար։

«Յայտնուեցաւ աշխարհի ազատաբարը» Մարդ-Առիւծը սպանեց սպիտակ դեխն, որ յափշտակում էր աղջիկներին և տղաներին։ Ո՞վ մայրեր, սրբեցէք ձեր աշքերից արցունքները, էլ յանկարծակի ձեզ չի շփոթեցնի որդու յափշտակելու լուրը։ Մի լաք, օրիորդներ, ձեզ այլ ևս չեն տանիլ սպիտակ դեխ մօտ, և դուք, թշուառ երիտասարներ, հանգստացէք, ձեր մարմնից այլևս մաքուր արին չի թափուիլ։ Ուրախացիր, ովք Հայրենիք, որդիքդ քեզ են մնալու, որովհետև թշնամիդ ստացաւ իւր պատիքը... Ընորհալի հերոս Մարդ-Առիւծին տուի իմ կրտսեր գուստը և բազմեցրի գահիս վրայ, ինձնից յետոյ նա կըլինի ըստ թագաւորը, էլ ոչ մի թշնամի չի կարող քեզ նուածել։ Ազատութեան օր է այսօր մեզ համար. եկէք և ուրախացէք ինձ հետ, ով ժողովուրդ. ձեռք տուէք Մարդ-Առիւծին և միասին աշխատեցէք Հայրենիքի բարօրութեան համար. ապրեցէք համերաշխութեամբ, հարկ եղած ժամանակ միասին դիմադրեցէք թշնամոն...»։

Թագաւորի մունետիկները ցրուեցան երկրի ամեն կողմը աւետելու ժողովրդին այդ երջանկութիւնը։

Խաղաղ, հովասուն առաւտօն էր. սրանչելի քնութիւնը մարդկանց մէջ հօգի էր ներչնչում։ Ծառերի տերեները, հովիտների նախուն ծաղիկները վայելչագեղ զարդարում էին գեղեցիկ քնութիւնը... Այդ գեղեցիկ առաւտը, առաջին առաւտն էր, որ մարդիկ իրանց ազատ էին զգում ազատ օդի մէջ։ Նրանց ուրախութիւնն անշափ էր...»։

Մարդկանց ազատարար Մարդ-Առիւծը հասած այդ

## ԺԱ

Մարդ-Առիւծը սպատերազմական յաղթութեան դափնիով պսակուած երեցաւ ժողովրդի մէջ։ Նրա սէզ կազմուածքը, չնորհալի արտաքինը, հպարտ և վեհ հայեացքը հրճուանք էին լավատճառում ամենքին։ Հերոսի ետեից ծանր քայլերով գալիս էր ամբոխը՝ անընդհատ «կեցցէ անյաղթելի հերոսը, հայրենիքի պատիշը» գոռալով։ Բաքարն առաջ գնաց դիմաւորելու և հայրական գորովանքով համբուրեց նրա զոյգ աչքերը։ Լուսանման երեք քոյրերից ամեն, մէկը պատրաստ էր նրա հարսնացուն լինելու. բայց ընտրութիւնը փեսացուիցն էր կախուած։

Հերոսը ոտը դրեց արքայական պատշգամբի վրայ թէ չէ, լուսանման քոյրերը ուրախութիւնից կարմրեցին։ Մարդ-Առիւծը իւր ձեռքն առաջարկեց կրտսեր քրոջը, միջնակին խնդրեց իւր եղքօր՝ Դարա-Մարդու ամուսինը դառնալ, իսկ անդրանիկին առաջարկեց իւր անդրանիկ եղքօր՝ Առջնանի ձեռքը։ Նրանց հրճուանքն անսահման էր, եղեքն էլ իրանց յարմար և համահաւատար գեղեցիկ փեսաներ գտան, որոնց հետ յաւիտեանս երջանիկ պիտի ապրէին։

Թագաւորի տունը կենդանացաւ, փառաւոր խնճոյք սարքեցին, սկսուեց մեծ զուարձութիւն։

Թագաւորը հրամայեց աւետել ամբողջ աշխարհին։

Գիառքին շտապեց յետ դառնալ հօր մօտ, որովհետև յիշում էր նրա խօսքերը և ուզում էր օր առաջ տեսնելնը-րան:

Գրչով չի կարելի նկարագրել այն սրտաշարժ տեսարանը, երբ փեսան հրածեշտ տուաւ իւր նշանածին, քենիներին ու աներոջը: Բաքարը համբուրեց նրան, լուսանման հարսնացուն դառնապէս արտասւում էր. նրանք չէին ուզում իրանց ազատչն թողնել որ գնայ, բայց Մարդ-Առիւծը մխիթարեց նրանց:

Թագաւորը հրամայեց բերել երկու սպիտակ և ոսկեգոյն հրեղէն ձիեր, որոնց ինքն էր մեծացրել:

— Այս երկու հրեղէն ձին ընծայում եմ քո եղբայրներին, — ասաց Բաքարը: Առաջնորդիր իմ փեսաներին և բեր այստեղ:

Մարդ-Առիւծը ճանապարհ ընկաւ:

Այն օրը կարծէք բնութիւնն էլ էր ուրախացել և առանձին յարգանք ու պատիւ տալիս մարդկանց ազատիչ հերոսին: Արեգակը երկնքից արձակում էր իւր ճառագայթները, զով օդին անուշահոտութեամբ էր բուրում. լեռան վրայ գտնուած խիտ անտառի ծառերը կամար էին կապել Մարդ-Առիւծի համար՝ որ նա անցնէր այդ բնական կամարի տակով և շոգից չնեղուէր: Առջևի ընդարձակ դաշտը ծածկուել էր երփներանգ ծաղիկներով. օրը ցերեկով անուշ ձայնով դայլալում էր սոխակը...:

Մարդ-Առիւծն անցնելով յիշեալ կամարի տակով, վերջապէս հասաւ այն վայրին, ուր նա ճանապարհը պիտի շեղէր, յանկարծ նոյն կմաղքը երևեցաւ, որ գնալու ժամանակ տեսնել էր. նա այժմ ածում էր փոքրիկ տաւիղի վրայ և երգում: Կմաղքը երբ տեսաւ Մարդ-Առիւծին, բացականչեց.

— Օրնուի բազուկդ, ինձ նման շատերին փչացրեց

սպիտակ գեղ... Թոնդ ժողովուրդը բեզ հպատակուի իբրեւ իւր ազատչի:

Մարդ-Առիւծը շատ զգացուեց, նրա աչքերից արցունքներ թափուեցան ու ասաց ինքն իրան. «Միթէ ինձանից առաջ ոչ ոք չկարողացաւ թափել դեփ արիւնը: Շնորհակալ եմ հօրիցս, որ պատճառ դարձաւ այս փառաւոր ճանապարհն ընտրելու: Միայն իմ ցանկութիւնսէ, որ դարձեալ կարողանամ կենդանի տեսնել ալուր հօրս և սիրելի եղբայրներիս...»:

Այդ մտածմունքների մէջ էր նա, երբ հեռուից նրկատեց հրեղէն ձիու նախկին բնակարանը: Ալոր դարբինը զուրս նայեց խրճիթից. հրեղէն ձին երբ տեսաւ դարբնոցը, ականջները խլշացրեց և շատ ուրախացաւ, երբ զգաց իրան իւր հայրենիքում... շտապեց համնել դարբնոցը և տեսնել իրան կերակրողին: Մօտեցաւ թէ չէ այնպիսի մի խրխնջոց բարձրացրեց, որ դարբինը զուրս վազեց, գրկեց իւր բարեկամ ձիուն և համբուրեց նրա դոյդ աշքերը:

Այն օրից երբ Մարդ-Առիւծը տարել էր ձիուն, դարբնի աչքից արտասուրը չէր ցամաքել: Ճատ սպասելուց սպիտակել էին նրա մաղքը: Բայց այժմ կարծէք թէ նրա համար նոր օր լուսացաւ, մանաւանդ երբ լսեց դեփ մահը:

բեր սպասում էր երրորդ որդու գալստեանը, որ գնացել էր օտար երկիր, բայց թէ մէր, կամ կենդանի էր արդեօք թէ ոչ, այդ չգիտէր նա...: Երկու եղբայրները մեղաղրում էին իրանց հօրը, որովհետեւ նա էր ուզարկել Մարդ-Առիւծին հեռու աշխարհ: Կրտսեր որդին ընտանիքում ամենքի աջքի լոյսն էր, ամենքը նրան սիրում էին և նրանով միմիթարւում:

**ԺԲ**

Հերոսը ձիուց ցած թռաւ որ փոքր ինչ հանկստանայ շուարում, իսկ դարբինը հրեղէն ձին դարձեալ դարբնոցում կապեց, չաղացրեց կրակը, շիկացած երկաթներից սկսեց մեխեր կոել և ածել ձիու առաջ: Ձին սկսեց ագահաբար ուտել: Ծերացած դարբինն ուրախութիւնից չգիտէր ինչ անէր, նա չէր ուզում բաժանուել իւր սիրելի ձիուց, ուզում էր միշտ նրա մօտ մնալ:

Մարդ-Առիւծը տեսնելով որ անկարելի է դարբնին ձիուց բաժանել, ասաց նրան. — Դու կըդառնաս թագաւորի ախոռապետը, նրա ողորմութիւնը քեզանից անպակաս կըլինի: Անպատճառ պէտք է ես իմ հրեղէն ձիով գնամ, ահա ինձ հետ տանում եմ և ուրիշ երկու հրեղէն ձի: Երբ կըվերապառնամ՝ իմ երկու եղբայրներով, այն ժամանակ քեզ էլ հետո կըտանեմ հեռու աշխարհ, որովհետու սպանելով սպիտակ դեմքն՝ թագաւորութիւն ժառանգեցի: Զախշախեցի դարերով ճնշուած ժողովրդի ստրկական շղթաները. մեր աշխատանքով և հրեղէն ձիու խորհրդով ժողովրդի համար ազատութիւն ձեռք բերինք:

Մարդ-Առիւծն այդպէս յոյս տուաւ դարբնին և ճանապարհ ընկաւ դէպի իւր տուն: Երկար ճանապարհ անցաւ, վերջը հասաւ իրանց ընդարձակ կանաչազարդ մարզագետնին, ուր էր ալեսոր ծերունու խրճիթը: Նա իւր երկու որդոց հետ միշտ նստած օջախի առաջ, անհամ-

էր մինչև այժմ, որտեղից է գալիս, ինչու այդպէս ու-  
շացաւ...

Ծերունի հայրը էլ չկարողացաւ դիմանալ այդ ուրա-  
խութեանը. նա գոմաթափուեց, ծնկները թուլացան և  
վայր ընկնելով իւր որդոց բազուկների վրայ հոգին ա-  
ւանդեց:

Երջանիկ և օրինակելի ծերունուն փառաւոր հանդի-  
սով թաղեցին և բիւրեղեայ աշտարակ կանգնեցրին գե-  
րեղմանի վրայ:

Երեք գեղեցիկ եղբայրները նստեցին երեք հրեղէն  
ձիերի վրայ և ճանապարհ ընկան դէսի Բաքաւորի  
պալատը...:

## ԺԳ

Հայրը իւր կեանքի վերջին օրերը հառաշանքի և  
լացի մէջ անցկացրեց. նա կարծում էր, թէ որդին ար-  
դէն մեռած է. գիշեր ու ցերեկ դառն մտածմունքները  
տանջում էին նրան:

Մի անգամ օջախի առաջ նստած ծերունու բունը  
տարաւ: Երազում նա տեսաւ կրտսեր որդուն՝ Մարդ-Ա-  
ռիւծին, իրը թէ նա աշխարհի բռնաւոր սպիտակ դեմու-  
սպաննել էր: Ուրախացած զարթեց և պատմեց որդոց իւր  
տեսած երազը. — Ահա զալիս է զաւակս. փողեր փշեցէք  
և թմբուկներ զարկէք, երազումս տեսայ, որդիս հերոս  
է եղել, պատերազմի մէջ կտրիճ է նա: Նա զալիս է և  
ինքը կըպատմի իւր փառաւոր յաղթութեան մասին: Մահու  
մօտեցել է, որովհետեւ արդէն կատարուել է սրտիս  
ցանկութիւնը, որդիս սպաննել է պիղծ գեին: Հայրենիքի  
համար այն է լաւ, երբ որդին գերազանցում է հօրը:  
Որդուս մեծացրի հայրենիքի համար, այժմ ես հանդիսա-  
ւ ուրախ կ'իջնեմ գերեզման:

Հայրը դեռ չէր աւարտել իւր խօսքը, երբ որդիքը  
ոտնաձայն լսեցին: Դաշտի վրայ երեսացին երեք հրեղէն ձի,  
հետն էլ իրանց կորած կարծուած եղբայրը:

Մարդ-Առիւծը ներս մտաւ խրճիթը թէ չէ, ամենքն  
էլ վրայ ընկնելով ուրախութեամբ գրկեցին և համբուրե-  
ցին նրան և սկսեցին զանազան հարցեր տալ, թէ ուր



Քաղաքի դրսի արուարձանում, ընդարձակ դաշտի վրայ հաւաքուեցան թագաւորի հպատակները և սկսեցին դուարձանալ: Դաշտի ամբողջ երկարութեամբ չինած էր մի բիւրեղեայ սրահ, որի մէջ սառը ջրի բազմաթիւ շադրուաններ էին բղիսում:

Թագաւորն ուզում էր ժողովրդին ամեն տեսակ հանդէմներով ուրախացնել։ Մկսուեց զօտեմարտութիւն, ձիարշաւ, նետածկութիւն։ Լարախազայներն էլ իրանց խեղիատակութիւններով ժողովրդին զուարճացնում էին. երաժշտութեան և երգիչների ձայնը շատ հեռու էր համնում. իսկ տափդի, քնարի, զունա-դհօլի, սրնգի ու գայլիրայի ձայնը օդին էր թնդացնում։ Մրցութիւնների մէջ գերազանց հանդիսացող երիտասարդներին մրցանակներ և պատիւներ էին տալիս, միւս տղաներն ու աղջիկները ուրախացած պար էին բռնում։ Նուագածուները շարունակ նուագում ու երգում էին։

Դաշտի ամեն կողմից երևում էր բիւրեղեայ աշտա-  
րակը, որի գլխին ծածանում էր արքայական դրօշը, իսկ  
աշտարակի մոտ շինած ոսկեայ ահապին զռնբաց սրահը  
փայլում էր: Սրահի յատակի վրայ փոռած էին թուրա-  
նի թանկագին գորգեր, որոնց վրայ նկարուած էին մե-  
ծամեծ յաղթութեանց պատկերները. մի տեղ Բաքարը  
նստած հրեղէն ձիու վրայ, մերկացած սրով հալածում է

թշնամուն, որ փախչում է նրա առաջից: Միւս տեղ Մարդ-Առիւծը կռւում է մեծ դեմք հետ: Դեռ ժայռից ցած է նայում, իսկ Մարդ-Առիւծը նրա դէմ կանգնած լարել է ազեղը և դեմք կտրծքն է նպատակ դրել: Մի այլ տեղ դեռ իւր կրծքում խրուած նետով ցած է գլորուել ժայռից և իւր ահագին բազուկներով փորփրել է լեռան կողը: Անյաղի հերոսը ժպտադէմ նայում է վիրաւորուած դեմքն, նրա աշքի առաջ դեռ փչում է շոնչը և պիղծ արինով լցնում ձորը: Թաւիշների վրայ ակներով և մարդարիտներով ասղնեգործուած էին որսորդութիւնների և զանազան հանդէսների պատկերներ:

Սրահում դարսուած էին երեք գահեր՝ զարդարուած սուկով, արծաթով, զմրուստներով ու լալ քարերով։ Գահերի վրայ դրած էին երեք թագեր՝ պատած գոհարներով, որոնց փայլը արեի առաջ շացնում էր մարդուն։ Փողովուրդը հիանում էր այդ ամենի վրայ։

४९


Պալատականները և ուրիշ պաշտօնեանները շարուած էին գահի շուրջը։ Առաջին տեղը բռնել էր ծերուանի ջրաղացպաննը, յետոյ իննառևն նախարարները իրանց դրօշակներով, ապա արքայի խորհրդատունները և բազմաթիւ պալատականներ, իսկ ամենից վերջը շարուած էր հետևակ գօրքը՝ Ծուռով 50 հազար։

Միւս կողմում, հեռուից երեսում էր հեծելազօրքը զգեստաւորուած ազգային տարազով և սպառազինութեամբ. դրանցից շատերը չափ էին գցում իրանց նժոյգները և զանազան ճարպիկութիւններ անում:

Հանդիսին առանձին շուրջ էին տալիս արքայական հիւրերի զգեստները, որոնք գոյնզգոյն ուսկեկար ասրդ-նեգործութիւններով այնպէս էին զարդարուած, ինչպէս երկինքը փայլուն աստղերով:

Հրապուրիչ պատկեր էր ներկայացնում նաև արքայական զօրքը փաթաթուած ոսկէ և արծաթէ զգեստների մէջ, որոնց հետ արեգակի ճառագայթները խառնուելով արտափայլում էին օդի մէջ և գրաւում տեսնողի ուշադրութիւնը:

Յանկարծ օդը թնդաց բազմաթիւ կեցցէների ձայներից, որին յաջորդեց փողերի ձայնը. թագաւորի վիսաները գալիս էին: Խնեսուն նախարարները ձիերի վրայ հեծած առաջ անցան Ն. րանց առջևից զնում՝ էին խաչեղբայր-



ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԴԻՄԱԿՈՐՈՒՄՆ «ՄԱՐԴ-ԱՌԻ» ԵՒ ՆՐԱ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՑՐՆԵՐԻՆ

Ները: Զօրքն էլ առաջ խաղաց, որոնց գոյնզգոյն դրօշակ-ները ծածանւում էին օդի մէջ:

Հուսանման դուստրները նստեցին իրանց բիւրեղեայ գահերի վրայ, իսկ նրանցից վերև երկրի տէրը՝ Բաքարը բազմեց իւր ոսկէ գահի վրայ:

Զանգահարութեան և թմբուկի ձայնը անընդհատ լսում էր, իսկ զուռնա-դհօլի ձայնը օդն էր թնդացնում: Այդ ընդհանուր իրարանցման ժամանակ երեցան երեք գեղեցիկ եղբայրները: Զօրքն ու ժողովուրդը նկատելով այդ, սկսեցին «կեցցէ» գոչել, իսկ մունետիկները ասպանդակեցին իրանց ձիերին և առաջ անցան: Ձիերի տրոփինից գետինն ու լեռները արձադանք էին տալիս: Գետնից բարձրացած փոշին ամպի էր նմանում:

Ահա այդպիսի յաղթական զնացքով օրուայ հերոսները մօտեցան աշտարակին, ցած թռան ձիերից, մերկացրին իրանց սրերը և վեհութեամբ կանգնեցին թագաւորի առաջ...: Բաքարը ժպտալով ընդունեց նրանց, իսկ պալատի զիխաւոր սպասաւորը դուրս դալով սենեակից մատոյց նրանց ոսկէ կոնք՝ թանկագին ակն ու մարգարիտներով լի: Խնչպէս զիշեր ժամանակ Կշռա համաստեղծութիւնը փայլվում է երկնքում, այնպէս էլ երեք րոյլերի զգացմունքով լի սրտերը տրոփում էին: Փեսաներն առաջ եկան. Բաքարը դիմաւորեց նրանց և երեքին էլ հայրական սիրով համբուրեց...:

Գեղանի օրիորդների ուրախութեանը չափ չկար, երբ մօտիկից տեսան իրանց սիրելի նշանածներին:

Փեսացուները բազմեցին իրանց նշանածների կողքին առանձին գահերի վրայ:

Սկսուեց արքայաշուք հարսանեաց հանդէսը: Ժողովուրդը շարունակեց իւրքէֆնու զուարձութիւնը: Նախ զնդա-

լաղով ժամանակ անց կացրին, յետոյ սկսուեցաւ նետաձկութիւն, մենամարտութիւն և ասպա թէ գինեխումը:

Բիւրեղեայ սրահում երկկարգ նստեցին հիւրերը, տակառապետները շուտ-շուտ փոխում էին թունդանոցներն ու լցնում գինու թասերը: Առաջին թասը թագաւորը պիտի վայելէր. նա վերցրեց բաժակը և հպատակների առաջ այսպէս սկսեց խրատել իւր որդոց.

— Այսօր հաւաքուած այս սրահում ազատ կերպով զուարձանում ենք: Արդարութիւնը վերջապէս յաղթող հանդիսացաւ, Աստուած չկորցրեց մեզ. նա ուղարկեց Մարդ-Առիւծին, որ գալով ազատեց ամբողջ աշխարհը սպիտակ գեի բռնակալութիւնից: Թագաւորութիւնս նրան տուի: Նա բերեց իւր հետ հերոս եղբայրներին...: Այդ երեք երիտասարդները մեր թագաւորութեան աչքն են: Նրանց տուի իմ լուսանման դուստրները: Այժմ մենք ունինք երեք միմեանց հաւաքար թագաւորութիւն. թող Արծանը արևելիան կողմը նստի, Դարա-Մարդը՝ արևմտեան. իսկ դու՝ իմ քաջ Մարդ-Առիւծ, մնացիր այստեղ և բազմիր իմ սեպհական գահի վրայ: Դուք երեք քաջ հերոսներ, կըլինիք ժողովրդի հիմքը, ոյժը, զօրութիւնը և օգնականը, թշնամու առաջ միշտ արթուն կըմնաք. իննսուն նախարարութիւն ձեր հպատակութեան տակը կըլինին: Նրանց դրօշակներն արդէն պատրաստ են, որ առանձին փայլ և շուք տան ձեր հըպատակներին: Բայց երբ, որդեակը իմ, թշնամին ձեզ պաշարի, դուք երեքով միաբանուած, ձեռք ձեռքի տուած քաջութեամբ պատերազմեցէք: Միշտ աչքի առաջ ունեցէք որ «միութիւնը ոյժ է»: Մարդ-Առիւծը պատերազմի ժամանակ կ'անցնի ձեր զլուխը, նա կ'առաջնորդի պատերազմի մէջ, իսկ դուք երկու եղբայրներդ, ներքին կարգադրիչներ կըլինիք և պաշար կըմատակարարէք թէ զօրքին և թէ հպատակներին: Բայց երբ Աստուած ձեղ յաղթու-

թիւն պարզեցէ և պատերազմից յետոյ խաղաղութիւն տիրի,  
ձեզանից ոչ ոք չհամարձակուի քանդել իմ այս կտակը:  
Սրբութեամբ կատարեցէք դրուած օրէնքը, միշտ աչքի  
առաջ ունեցէք իմ այս հպատակների երջանիկ դրութիւ-  
նը և նրանց մէջ կարգ ու կանոնի զիտակցութիւնը միշտ  
վառ պահեցէք: Գոյ եմ վիճակիցս, որ Աստուած ինձ այս օրին  
արժանացրեց և կարողացայ օրհնել իմ որդոց պսակն ու  
փեսաներիս իրաւունքը...: Իսկ դուք, արժանաւոր հպա-  
տակներ, վհատութիւնը, երկշոտութիւնը և կասկածը թնդ  
միշտ հեռու լինին ձեզանից, որովհետեւ երկիւղը Աստու-  
ծոյ զինուորմների համար չէ: Եթէ երկիւղ չինի ձեր մէջ,  
ձեր բազուկները կըօրանան և միշտ կըալթէք թշնա-  
մուն: Հաւատարմութեամբ ծառայեցէք ձեր թագաւորնե-  
րին և լսեցէք նրանց...:

— «Կեցցէ Բաքար արքան, կեցցէ, կեցցէ», միաձայն օդը  
թնդացրեց ժողովուրդը։ Դատարկեցին թասերը։ Այդ կե-  
նաց թասից յետոյ ուրիշ շատ կենացներ ևս խմեցին։  
Սպա սկսեցին երգել, որին ձայնակից եղան նուազածու-  
ները, որոնք սկսեցին միմեանց հետ մրցել յանպատրաս-  
տից ոտանաւորներ յօրինելով……

Հեծեալները մի դառիվայր տեղից իջան գէպի կպ-  
նաշազարդ դաշտավայրը։ Այստեղ կանաչ թափշի նման  
խոտերի մէջ նստած էր հովիւր, նրա մի կողմ կանգնած  
էր մի շուն, իսկ միւս կողմը ընկած էր հովուի մահակը։  
Հովիւն ածում էր սրնգի վրայ, որի քաղցր ձայնը գրաւում  
էր ոչխարներին ու այծերին, որոնք հաւաքուելով նրա  
շուրջը, նստածել էին կանաշազարդ դաշտի վրայ և աղատ  
որոնում էին։

Թղիկերի միջի սոլսակը նեղանում էր հովուի վրայ, որ  
իրան խանգարում էր երգել բայց հովին ենչ մեռաւ ոռ է ու

Արեգանման եղբայրները նստած հրեզին ձիերի  
վրայ շտապով գնում էին, բայց երբ լսեցին սրնովի  
ձայնը, կանգ առան: Այդ քաղցր ձայնին արձագանք էին  
տալիս լեռներն ու դաշտերը:

Հովհաննես մի նոր երգ էր ածում, որ գովասանութիւն  
էր Մարդ-Առիւծին. «Թաշտերն ու անտառները կանաչով են  
ծածկուել, իսկ այդիները զարդարուել են երփներանդ  
ծաղիկներով։ Հայրն ուրախ է իւր օջախում, որ որդին  
հերոսի անուն վաստակեց. Մարդ-Առիւծն է այդ հերոսը,  
որ հայրենիքն աղատեց սպիտակ դեկից, զախշախեց բըռ-  
նաւորի գլուխը։ Այսուհետև Մարդ-Առիւծն է մեր թագա-  
ւորուս...»

Անհամար բազմութիւն մարդկանց և կանանց, օ-

բիորդների և տղաների ուրախ, գուարթ և աներկիւղ մի  
մի շաբաթուայ ճանապարհ հեռաւորութիւնից երգելով ու  
նուազելով զալիս էին հարսանիքի ուրախութեանը մաս-  
նակից լինելու։ Նրանց վշտերը այն օրուանից փարա-  
տուեց, երբ թշնամին իւր արժանի պատիժն ստացաւ։

Ճատ չըեղ էին իննսուն նախարարների գնդերը։  
Նրանց փայլվող զգեստները կախարդիչ պատկեր էին  
ներկայացնում. տեսնողը կարծում էր թէ օդի մէջ հուր  
է ցայտում, որ մօտեցողին կարող է խոկոյն այրել։ Այդ  
զնդերն իրանց նախարարների առաջնորդութեամբ կար-  
գով շարուած զնում էին արքայակուստրների հարսանեաց  
հանդէսը կատարելու։

Ժողովրդի առջեկից զնում էին զեղեցիկ հրեղէն ձիե-  
րի վրայ հնծած երեք փեսացները։ Տեսնողները հիտ-  
նում էին նրանց վայելչապեղ կիրպարանքի և հասակի  
վրայ։

— Երանէր դրանց ծնողներին, որ այդպիսի զաւակ-  
ներ ունին, ասում էին շատերը։

— Երանէր ձեր հօրը, որ ձեզ պէս երջանիկ որդիք  
է մեծացրել, աւելացնում էին միւսները։

Եղբայրները լսելով տեն կողմից իրանց մասին այդ  
կովասանիքը, նրանց գէմքերը զուարթացան, առավանդակե-  
ցին ձիերը. ուզում էին շուտով համնել պալատը և տես-  
նել լուսանման հարսնացուներին։

Ճանապարհին ամեն տեղ ժողովուրդը կանգնած փա-  
ռաւոր ցոյցեր էր անում, «կեցցէ» էր աղաղակում, երբ  
անցնելիս տեսնում էր իւր աղատչին...։ Ամենքը հարսա-  
նիքի պատրաստութիւն էին տեսնում։

ԱՅՍԱՐԱԹ ԳՈՎԱՅԻՑ

ԺԷ

Այնտեղ՝ ուր վերջանում է Բաքարի տէրութիւնը,  
պահապանների նման շարուել են լեռներ։ Այդ պահա-  
պանները սպիտակ զլսարկ ունին ծածկած, ձեռքներին սառ-  
ցային տէզեր բանած և հեռուից այնպէս են երկում  
կարծէր փաթաթուած են կապոյտ եավինջիների մէջ։  
Դրանք այդ երկրի արթուն պահապաններն են։ Դրանցից  
սկիզբն է առնում Կուր գետը, որ օղակ-օղակ օձի պէտ  
փրփրալից և կատաղաբար առաջ է ընթանում ահազին աղ-  
մուկ բարձրացնելով։ Նա լուր է բերում սպիտակ զլսար-  
կաւոր պահապաններից, որոնք ապսպրում են Բաքարի  
ժառանգներին. — «Դուք աներկիւղ եղէր, մենք ամուր ենք,  
անառիկ բերդերի նման շրջապատել ենք մեր հայրե-  
նիքը և միշտ կազմ ու պատրաստ ենք։ Մենք մեր աշ-  
խարհի հաւատարիմ պահապաններն ենք և միշտ կըլինինք։  
Հասել է փառքի ժամանակը, ուրախ ենք, որ մեր թա-  
զաւորները հերոսների հերոսներ են։ Առ ոչինչ են մեզ  
համար որևէ տանջանք, մենք պատրաստ ենք մեր արեան  
վերջին կաթելլ թափել, միայն թէ թշնամուց տպատ լի-  
նի մեր հայրենիքը և աղատ ու աղատով իւր ժողովուր-  
դը...։




Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ռ Ո Ւ Խ Թ Ի Խ Ե Ն Ե Ր

ՅՈՎՍԵՓ ՅՈՎՍԵՓԵԱՆԻ

Վաճառանոցում վաճառւում են հետևեալ գրքերը.	
Անդրսէն, Անձունի բագիկ. . . . .	— 5
Այլազեան, Բ. Աշոտ երկաթ Ա. և Բ. հ.. . .	1 50
» Տանջանքի բովից. . . . .	— 30
Քրօքեր, Փորձանքների բժշկարան, թարգ. Օհանեանի. . . . .	— 20
Ճերեթէլի Գ. Մարդ Առիւծ, փոխ. Գ. Տէր-Դաւթեանի. . . . .	— 20
Կարամզին, Թշուառ Եղիսաբէթ, թարգ. Գ. Տէր-Դաւթեանի. . . . .	— 10
Կուլիկովա, Ծիկի, թարգ. օր. Ա. Սահակեանի. .	— 5
Կարմէն Սիլվա, Երկու հերեաթ. . . . .	— 10
Չորեցի, Զուր Ժամավաճառ. . . . .	— 30
Ճուղուեան, Յ. սար. Մոռացուած աշխարհ Ա. և Բ. հատ. . . . .	— 1 10
Շմիդտ, Մըռուան, թարգ. Ա. Քալանթարի. .	— 20
Շէքսպիր, Համլէտ, թարգ. Յ. Խան-Մասէհեանի. .	— 75
Պոկրուկսկիի, Մանուկների հոգատարութիւնը. .	— 20
Վուչէտիչ, Կարմիր լապտեր, թարգ. օր. Տէր-Մարկ. . . . .	— 30
Վան Դէյկ, Չորրորդ մոդ. . . . .	— 6
Տօլստոյ, Կովկասի գերին, թարգ. Պ. Պ. . . . .	— 20
Օժէշկօ, Բը-ա-բա. . . . .	— 5
Քամալեան Ա. Խարազի տղայ. . . . .	— 40

Նոյնպէս վաճառւում են ամեն տեսակ ձիթանկար պատկերներ (Արծրունու պատկերի գինն է 25 կոպէկ, Փառք-Հայաստանի 75 կ. և այլն), շրջանակներ, տետրակներ, թուզիթ, պայուսակներ, մատիտներ, թանաքամաններ, գրիչներ, և այլն:

Հասցէն՝ Տիֆլիս, Ավլաբար, Վիննի подъемъ, магазинъ № 30, Йосиф у Осилянцъ.



## ՃՈՒՏՈՎ ՀՈՅՍ ԿԸՏԵՄՆԵՆ

մանկական ընթերցանութեան համար

工

፩ ዓ ቅ ጥ የ ሪ - ቁ ቤ ተ ለ ሚ ዓ

#### 4 պատկերով:

ԳԻՆՆ է 5 ԿՈՊԵԿ

II

## ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՆԵՐ

#### 4 պատկերով:

ԳԻՒՆ Է 5 ԿՈՊԵԿ



Պատրաստ են տպագրութեան համար Դաւիթ  
Տէր-Դաւթեանի հետեւալ աշխատութիւնները.

1. *Փոքրիկ Լիոնիկի արկածները.*
2. *Փոքրիկ Թօբինզոններ.*
3. *Դժբախտ ընտանիք.*
4. *Բնագիտական զրոյցներ.*
5. *Ժամացոյցի պատմութիւնը.*
6. *Մարմնամարզական խաղեր.*
7. *Ռօբերտ Փուլտոն.*
8. *Իգ. Լոյֆլա. (Թարգմանութիւն).*
9. *Ջրհեղեղ. (Թարգմանութիւն Էմիլ Ջոլայից).*
10. *Ցիկօ. (Թարգմանութիւն Կազբէկից).*
11. *Հայր Պոլիկարպոս Հնաղանդ. (Թարգմանութիւն Զարյա Էդուարդից):*

Դրանցից շուտով լրյու կը տեսնեն մանկական ընթերցանութեան համար. «Ռօբերտ-Փուլտոն» և «Մարմնամարզական խաղեր» (իրաքանչյուր 4 պատկերով); ծախտում է բոլոր գրավաճառանոցներում և փոխադրողի մօտ:

Փոխադրողի հասցէն՝ Տիֆլիսъ, учителю Тандо-  
евского женского училища, на Михайловской улицѣ.

Օտար քաղաքներից պիտի գիմնի այս հասցէով  
Տիֆլիսъ, Авлабаръ, Винный подъемъ, магазинъ  
№ 30, Иосифу Осипянцу.

2013

23682

